ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

08 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Անդրանիկ Տոնոյանը, Հայկ Մարիկյանը, Հմայակ Մարտիրոսյանը, Անուշ Իսպիրյանը, Լիլիա Հարությունյանը, Արծրուն Հակոբյանը, Սյուզաննա Նազարյանը, Արմեն Ջուլհակյանը,

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արսեն Հարությունյան, Գևորգ Մանուկյան, Սամվել Անտոնյան, Լուսինե Հովհաննիսյան,Գագիկ Շիրմազանյան, Լևոն Քալանթարյան, Արսեն Ավագյան, Էլմիրա Ռևազյան, Գրիգոր Պապյան, Արման Սուքիասյան, Անուշ Կիրակոսյան, Մարիամ Մանուկյան, աշխատակիցներ, ՀՈԱԿ-ների տնօրեններ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Գրիգորյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 62-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ***(ԶԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով Ստեփանավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը Ստեփանավան համայնքի 2025թ. բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 63-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման 9-րդ կետի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, Ստեփանավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Ստեփանավան համայնքի հողային հաշվեկշիռը 01.07.2025թ. դրությամբ՝ (համաձայն հավելված ձև 22):

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 64-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28. 12. 2023թ. N 2-11 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքը (Ստեփանավան, Ուրասար, Կաթնաղբյուր բնակավայրեր) ներառող Լոռի-5 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետության կառավարություն 27 ապրիլի 2006 թվականի N 570-Ն որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով և 71-րդ հոդվածով՝ Ստեփանավան համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության 06-106-0129-0029 կադաստրային ծածկագրի 51 . 0086 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 06-007-0624-0059 կադաստրային ծածկագրի 16. 74688 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 06-007-0624-0056 կադաստրային ծածկագրի 13. 6 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 06-106-0110-0017 կադաստրային ծածկագրի 22. 6785 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության 06-106-0110-0014 կադաստրային ծածկագրի 32 . 4306 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 06-007-0168-0004 կադաստրային ծածկագրի 3. 2716 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 06-007-0168-0002 կադաստրային ծածկագրի 6 . 82 հա մակերեսով հողամասերը Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0352-0008 կադաստրային ծածկագրի 5. 31344 հա մակերեսով, անտառ նպատակային

նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0063-0033 կադաստրային ծածկագրի 1 . 33087 հա մակերեսով, անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0063-0032 կադաստրային ծածկագրի 4 . 51549 հա մակերեսով, անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0267-0001 կադաստրային ծածկագրի 4 . 44539 հա մակերեսով, անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0273-0001 կադաստրային ծածկագրի 2 . 28181 հա մակերեսով, անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0058-0025 կադաստրային ծածկագրի 0 . 29646 հա մակերեսով հողամասերի հետ փոխանակմանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 65-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՕՔՍԱՆԱ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(Զեկ. Համլիկ Մովսիսյան)*

Ստեփանավան համայնքի ղեկավարին է դիմել Ստեփանավան համայնքի Ռաֆֆու փողոց թիվ 5/17 հասցեի բնակիչ Օքսանա Խաչատուրյանը (ծնված 20.12.1980թ. անձնագիր՝ AS 0203392, տրված 25 . 05 . 2018թ . 053-ի կողմից): Վերջինիս մոտ ախտորոշվել է Քթըմպանի c-r, ֆունկցիոնալության սահմանափակման միավորը 30% է, ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը միջին, ստացել է քիմիաթերապիայի 4 կուրս: Օքսանա Խաչատուրյանի առողջական խնդրի պատճառով ընտանիքը հայտնվել է կյանքի դժվարին իրավիճակում: Դրամական աջակցությունը անհրաժեշտ է բուժման ծախսերը հոգալու համար:

Հիմք ընդունելով Օքսանա Խաչատուրյանի կողմից ներկայացված 01.07.2025թ. թիվ 1466 դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ հոդվածի Ստեփանավան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ստեփանավան համայնքի բնակիչ՝ Օքսանա Խաչատուրյանին տրամադրել դրամական աջակցություն՝ 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 66-Ա)*

Ավագանու Անդամներ

Արմեն Գրիգորյան

Հրահատ Աբրահամյան

Լևոն Պապյան

Ատոմ Գագինյան

Աղունիկ Նալբանդյան

Արմեն Գրիգորյան Փ.

Ջոն Կիրակոսյան

Անուշ Բաղդասարյան

Արմեն Դավթյան

Վարսիկ Ասրյան

Արթուր Պապյան

Մարտուն Մարտիրոսյան

Վանո Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Մովսիսյանը _____